
















ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԹԵՐԹ	ԱՆՎԱՆՈՒՄ	ԾԱՆՈԹ.
ՋՕ-1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՍԿԻՁԲ)	
ՋՕ-2	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՎԵՐՋ)	
ՋՕ-3	ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	
ՋՕ-4	ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	
ՋՕ-5	ՁԵՂՆԱՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	
ՋՕ-6	ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԽԵՄԱ	
ՋՕ-7	ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԽԵՄԱՆԵՐ	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	Ջեռուցման մատակարարող խողովակ
	Ջեռուցման հետադարձ խողովակ
	Խողովակաշարերը հատակի հաստության մեջ
	Ալյումինե մարտկոցը հատակագծում
	Ալյումինե մարտկոցը սխեմայում
	Պողպատե պանելային մարտկոցը հատակագծում
	Պողպատե պանելային մարտկոցը սխեմայում
	Փական
	Փական դատարկման ծորանով
	Դատարկման ծորան
	Օդահան փական
	Խողովակաշարի թեքություն
	Օդափոխության արտածման համակարգ
	Բնական օդափոխության համակարգ
	Արտածման ճաղավանդակ

ՀՀ Գեղարքունիքի մարզի ճամբարակի թիվ 3 մանկապարտեզի ջեռուցման և օդափոխության նախագիծն իրականացված է համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի և գործող շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀ ՇՆ IV-12.02.01-04 ,СНП 2.08.01-89:

Ջեռուցման համար արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը ընդունված է՝ ըստ Բ հարաչափի $t_{\text{двн}} = -21^{\circ}\text{C}$:

Շենքի ջերմամեկուսացումից հետո արտաքին պատերի ջերմափոխանցման գործակիցը ստացվել է $0.41\text{վտ/մ}^2\text{ }^{\circ}\text{C}$, իսկ ձեղնահարկինը՝ $0.36\text{վտ/մ}^2\text{ }^{\circ}\text{C}$:

Ջեռուցման ծախսը մանկապարտեզի շենքի համար $Q=110\text{կվտ}$:

ՋԵՌՈՒՑՈՒՄ

Մանկապարտեզի շենքի ջերմամատակարարումն իրականացվում է առաջին հարկում կաթսաների տարածքում տեղադրվող 4 հատ պատին ամրացվող գազով աշխատող 30կվտ հզորությամբ տուրբո կաթսաներով:

Ջերմատարը ջուր է՝ $T_1=80^{\circ}\text{C}$ և $T_2=60^{\circ}\text{C}$ պարամետրերով:

Նախագծում ընդունված է երկխողովականի, հորիզոնական մատակարարումով, ջերմատարի փակուղային շարժումով ջեռուցման համակարգ: Մատակարարող խողովակները առաջին և երկրորդ հարկում անցնում են հատակի վրայով՝ սյուների և պատի արանքով (մետաղական պարկուճիմիջով), դռների դիմաց՝ հատակի հաստության միջով:

Խողովակաշարերը պոլիպրոպիլենից են: Հատակի հաստության մեջ խողովակները մեկուսացվում են:

Որպես ջեռուցման սարքեր օգտագործվել են գոյություն ունեցող ալյումինե մարտկոցները և նոր նախատեսվող պողպատե պանելային մարտկոցներ:

Յուրաքանչյուր մարտկոցի մատակարարող առբերիչի վրա նախատեսված է ջերմության կարգավորիչ կափույր, իսկ հետադարձի վրա՝ փակիչ կափույր:

Օդահեռացումը համակարգից իրականացվում է մարտկոցների վրա տեղադրված օդահան ծորանների միջոցով:




Համակարգի դատարկումը կատարվում է դատարկման ծորաններով փականների և դատարկման ծորանների միջոցով: Առաջին հարկի մատակարարող խողովակների դատարկման համար կաթայատանը նախատեսված է խորշ:

Մոնտաժման աշխատանքների ավարտից հետո ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրավլիկական և ջերմային փորձարկման (12կգ սմ^2):

ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Մանկապարտեզում նախատեսված է բնական արտածման օդափոխության համակարգեր: Խոհանոցում արտածումն իրականացվում է CA 250 օդամուղով: Բնական արտածման բոլոր օդատարերը վերև են բարձրանում ձեղնահարկ 1.0 մ և ծածկվում մետաղական ցանցով: Խոհանոցի արտածման(Ա1 համակարգ) օդատարը բարձրանում է կտուրից վեր 1մ: Ձեղնահարկից երկու արտածման հորանների միջոցով օդը արտանետվում է տանիքից դուրս:Բոլոր օդատարերը տանիքից դուրս ջերմամեկուսացվում են ֆոլգապատ ապակեբամբակով:

Արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

ՏՆՕՐԵՆ	Մ.ՀՈՒՄԵՅԱՆ		TGQ - 06 ՀԱՄԲԱՐԱԿԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ			
ՆԳՑ	Ն.ՍՏԵՓԱՆՅԱՆ					
ՃԱՐՏԱՐԱԳԵՏ	Կ.ԱՎԴԱԿՅԱՆ		ՋԵՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
				ԱՆ	ՋՕ-1	7
			ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՍԿԻՁԲ)	«ՄԱՈԱ ԵՎ ԴՈԱՏՐԵՐ» ՍՊԸ		